

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ

Համապատասխանության գնահատում.
Բառարան և ընդհանուր սկզբունքներ

(ISO/IEC 17000:2020, IDT)



Նախաբան

Հայաստանի Հանրապետությունում ստանդարտացման ազգային համակարգի հիմնական սկզբունքները և ստանդարտացման աշխատանքների կատարման կարգը սահմանված են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, ՀԱՏ 1.0-2013 «Ստանդարտացումը Հայաստանի Հանրապետությունում. Հիմնական դրույթներ» ստանդարտով:

Տեղեկություններ ստանդարտի մասին

1 ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՎԵԼ Է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի կողմից

2 ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՎ ՆԵՐԿԱՅԱՑՎԵԼ Է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲ ընկերության ՏՀ 21 «Համապատասխանության գնահատում և կառավարման համակարգեր» ստանդարտացման տեխնիկական հանձնաժողովի կողմից:

3 ԸՆԴՈՒՆՎԵԼ ԵՎ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է ԴՐՎԵԼ «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ի տնօրեն, ժամանակավոր պաշտոնակատարի հրամանով

4 ԳՐԱՆՑՎԵԼ Է Հայաստանի Հանրապետության ստանդարտացման նորմատիվ փաստաթղթերի գրանցամատյանում, N

5 Սույն ստանդարտը նույնական է ԻՍՕ ԻԷԿ 17000:2020 «Համապատասխանության գնահատում. Բառարան և ընդհանուր սկզբունքներ» (ISO/IEC 17000:2020 Conformity assessment - Vocabulary and general principles) միջազգային ստանդարտին: ԻՍՕ ԻԷԿ 17000:2020 միջազգային ստանդարտը մշակվել է ԻՍՕ/ԿԱՍԿՈ «Համապատասխանության գնահատման» (ISO/CASCO, “Committee on conformity assessment”) տեխնիկական հանձնաժողովի կողմից: Թարգմանությունը կատարվել է անգլերենից (en): Միջազգային ստանդարտի պաշտոնական օրինակը գտնվում է «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ-ում: Համապատասխանության աստիճանը՝ նույնական (IDT): Ստանդարտում ավելացված է վկայակոչված միջազգային ստանդարտների և ազգային ստանդարտների համապատասխանության մասին լրացուցիչ Գ (C) տեղեկատու հավելվածը:

6 ԳՈՐԾԱՐԿՎՈՒՄ Է ՀԱՏ ԻՍՕ 17000-2004 ՍՏԱՆԴԱՐՏԻ ՓՈԽԱՐԵՆ

Սույն ստանդարտի ուղղումների և փոփոխությունների վերաբերյալ տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների տեքստերը հրատարակվում են “Ստանդարտներ և տեխնիկական պայմաններ” տեղեկատվության մեջ: Սույն ստանդարտի վերանայման կամ չեղյալ հայտարարման դեպքում համապատասխան տեղեկատվությունը կհրատարակվի նշված տեղեկատվության մեջ: Ուղղումների, փոփոխությունների, վերանայման կամ չեղյալ հայտարարման վերաբերյալ համապատասխան տեղեկատվությունը, ինչպես նաև ուղղումների և փոփոխությունների նախագծերի տեքստերը տեղադրվում են նաև ընդհանուր օգտագործման տեղեկատվական համակարգում՝ Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմնի ինտերնետային կայքում (www.armstandard.am):

Բովանդակություն

Ներածություն

ԻՍՕ համապատասխանության գնահատման կոմիտեն (ԿԱՍԿՕ) մշակում է միջազգային ստանդարտներ՝ կապված համապատասխանության գնահատման գործողությունների հետ, ինչպիսիք են՝ փորձարկումը, հսկողությունը և սերտիֆիկացման տարբեր ձևերը: Երկար տարիներ ԻՍՕ/ԻԷԿ Գայդ 2-ում ներառված էր համապատասխանության գնահատման հիմնական բառարանը՝ կազմված փոքր թվով տերմիններից և սահմանումներից, որոնք սկզբում կազմվել էին տեղեկատվության փոխանակումը խթանելու և արտադրանքի սերտիֆիկացման խնդիրները լուծելու համար՝ հիմնված ավանդական արդյունաբերական արտադրանքի ստանդարտների վրա:

2000 թ.-ին ԿԱՍԿՕ-ն որոշեց հեռացնել համապատասխանության գնահատման տերմինաբանությունը ԻՍՕ/ԻԷԿ Գայդ 2-ից և փոխարենն առաջարկել ընդհանրական բառարան, որն ավելի հեշտ կիրառելի է համապատասխանության գնահատման համար նախատեսված միջազգային ստանդարտների շրջանակներում, ինչպես նաև համապատասխան փաստաթղթերի մշակման և վերանայման ժամանակ: Սույն ստանդարտի առաջին խմբագրությունը հրատարակվել է 2004 թ.-ին, որպես կայուն հիմք, որի շրջանակներում ավելի կոնկրետ հասկացություններ կարող են սահմանվել համապատասխան կերպով և արտահայտվել առավել համապատասխան տերմիններով:

Լրացուցիչ հասկացությունները, որոնք յուրահատուկ են որոշակի գործունեության համար, ինչպիսիք են՝ հավատարմագրումը, անձանց սերտիֆիկացումը և համապատասխանության նշանի կիրառումը, ներառված չեն սույն ստանդարտում, սակայն ներկայացված են այդ գործունեությունների հետ կապված միջազգային ստանդարտներում:

Առևտրի և կանոնակարգման հետ կապված տերմինները և սահմանումները տրված են բաժին 9-ում: Դրանք նախատեսված են ոչ միայն վերջիններիս կիրառումը համապատասխանության գնահատման շրջանակներում ստանդարտացնելու, այլև քաղաքականություն մշակողներին օգնելու վերացնել առևտրի խոչընդոտները՝ կանոնակարգման և միջազգային պայմանագրերի շրջանակներում:

Սույն ստանդարտում սահմանված տերմինները և սահմանումները, մասնավորապես բաժին 6-ում և բաժին 7-ում, արտացոլում են 2001 թվականի նոյեմբերին ԿԱՍԿՕ-ի կողմից ընդունված գործառնական մոտեցումը:

Սահմանված հասկացությունների, դրանց խմբավորման և դրանց փոխկապակցվածության վերաբերյալ առավել հստակ պատկերացում տալու համար, գործառնական մոտեցման նկարագրությունը տեղեկատվության համար ներառված է Ա հավելվածում:

Սույն ստանդարտում ներառված տերմինները վերաբերում են այն հասկացություններին, որոնք պահանջում են սահմանում: Համապատասխանության գնահատման ոլորտում հասկացությունները նշելու համար օգտագործվող ընդհանուր տերմինները հայտնի են և պարզաբանումներ չեն պահանջում, քանի որ դրանք կիրառվում են ընդհանուր լեզվով, ներառված չեն սույն ստանդարտում: Համապատասխանության գնահատման բոլոր ստանդարտներում և որոշակի կիրառման համար հատուկ սահմանումներ ունեցող տերմինները

ներառված չեն սույն ստանդարտում, սակայն ներառված են հատուկ համապատասխան ստանդարտում:

Այլ ստանդարտներում սահմանված համապատասխան տերմինները թվարկված են հավելված Բ-ում

-տերմիններ, որոնք կիրառելի են համապատասխանության գնահատման հատուկ խնդիրների համար, ինչպես սահմանված է համապատասխանության գնահատման այլ ստանդարտներում,

- տերմիններ, որոնք ընդհանուր առմամբ կիրառելի են համապատասխանության գնահատման համատեքստում, որոնց սահմանումները տրված են համապատասխանության գնահատման ստանդարտների խմբից դուրս գտնվող ստանդարտներում:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՍՏԱՆԴԱՐՏ

Համապատասխանության գնահատում. Բառարան և ընդհանուր սկզբունքներ

Оценка соответствия. Словарь и общие принципы

Conformity assessment -Vocabulary and general principles

Գործարկման թվականը՝

1 Կիրառման ոլորտը

Սույն ստանդարտով սահմանվում են ընդհանուր տերմիններ և սահմանումներ, որոնք վերաբերում են համապատասխանության գնահատմանը (ներառյալ համապատասխանության գնահատման մարմինների հավատարմագրմանը), ինչպես նաև համապատասխանության գնահատման կիրառմանը՝ առևտուրը խթանելու համար:

Համապատասխանության գնահատման ընդհանուր սկզբունքները և գործառնական մոտեցման նկարագրությունը ներկայացված են հավելված Ա-ում:

Համապատասխանության գնահատումը փոխազդում է այլ ոլորտների հետ ինչպիսիք են՝ կառավարման համակարգերը, չափագիտությունը, ստանդարտացումը և վիճակագրությունը: Համապատասխանության գնահատման սահմանները նշված չեն սույն ստանդարտում:

2 Նորմատիվ վկայակոչումները

Նորմատիվ վկայակոչումները բացակայում են:

3 Տերմինները և սահմանումները

ԻՍՕ-ն և ԻԷԿ-ը ստանդարտացման նպատակով արդիականացված տերմինաբանական տվյալների բազաները պահպանում են հետևյալ էլեկտրոնային հասցեներում՝

-ԻՍՕ առցանց հարթակ <https://www.iso.org/obp>

-ԻԷԿ էլեկտրոպեդիա <http://www.electropedia.org/>

4 Ամբողջությամբ համապատասխանության գնահատմանը վերաբերող տերմիններ

4.1 համապատասխանության գնահատում (conformity assessment)՝ սահմանված պահանջների (5.1) կատարման հավաստում

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Համապատասխանության գնահատման գործընթացը, ինչպես նկարագրված է Ա հավելվածի գործառնական մոտեցման մեջ, կարող է ունենալ նաև բացասական արդյունք, այսինքն հավաստել, որ սահմանված պահանջները չեն կատարվում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Համապատասխանության գնահատումը ներառում է, բայց չի սահմանափակում սույն ստանդարտով սահմանված գործունեության այնպիսի տեսակներ, ինչպիսիք են՝ փորձարկումը (6.2), հսկողությունը (6.3), վավերացումը (6.5), ստուգումը (6.6), սերտիֆիկացումը (7.6) և հավատարմագրումը (7.7):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3. Համապատասխանության գնահատումը ներկայացված է Ա հավելվածում որպես գործառնությունների շարք: Այս գործառնություններից յուրաքանչյուրին նպաստող գործունեությունների տեսակները կարող են նկարագրվել որպես համապատասխանության գնահատման գործունեությունների տեսակներ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 4. Սույն ստանդարտով սահմանված չէ «համապատասխանություն» տերմինի սահմանումը: «Համապատասխանություն» տերմինը ներառված չէ «համապատասխանության գնահատում» տերմինի սահմանման մեջ: Սույն ստանդարտում չի դիտարկվում նաև համապատասխանություն հայեցակարգը:

4.2 համապատասխանության գնահատման օբյեկտ (object of conformity assessment)¹
սուբյեկտ, որի նկատմամբ կիրառելի են սահմանված պահանջները (5.1)

Օրինակ՝ արտադրանք, գործընթաց, ծառայություն, համակարգ, տեղակայում, նախագիծ, տվյալներ, նախագծային փաստաթղթեր, նյութ, պնդում, անձ, մարմին կամ կազմակերպություն կամ դրանց ցանկացած համադրություն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Սույն ստանդարտում կիրառվող «մարմին» տերմինը վերաբերում է համապատասխանության գնահատման մարմիններին (4.6) և հավատարմագրման մարմիններին (4.7): «Կազմակերպություն» տերմինը կիրառվում է իր ամբողջական իմաստով և, ըստ համատեքստի, կարող են ներառել մարմիններ: Կազմակերպության՝ որպես անդամակցության վրա հիմնված մարմնի առավել կոնկրետ ԻՍՕ/ԻԷԿ ուղեցույց 2-ը կիրառելի չէ համապատասխանության գնահատման (4.1) ղրորտի համար:

4.3 առաջին կողմի համապատասխանության գնահատման գործունեություն (first-party conformity assessment activity)¹
անձի կամ կազմակերպության կողմից իրականացվող համապատասխանության գնահատման գործունեություն, որն ապահովում կամ համարվում է համապատասխանության գնահատման օբյեկտ (4.2):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Համապատասխանության գործունեության տեսակների բնութագրման համար օգտագործվող առաջին, երկրորդ, երրորդ կողմ բնութագրիչները (դեսկրիպտորները) չպետք է շփոթել համաձայնագրի համապատասխան կողմերի իրավաբանական նույնականացման հետ:

Օրինակ՝ օբյեկտի մատակարարների/պրովայդերների/, նախագծողների կամ սեփականատերերի կողմից իրականացվող գործունեությունները, օբյեկտում ներդրում կատարողների և օբյեկտի գովազդատուների կամ օբյեկտը խթանողների գործունեությունները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Եթե գործունեությունն իրականացվում է արտաքին մարմնի կողմից, որը գործում և հսկում է անձի կամ կազմակերպության կողմից, որն ապահովում կամ հանդիսանում է օբյեկտ, ապա նման գործունեությունը կոչվում է առաջին կողմի համապատասխանության գնահատման

գործունեություն (օրինակ՝ ներքին աուդիտներ, որոնք իրականացվում են խորհրդատուի կողմից, ով չի համարվում կազմակերպության անձնակազմի անդամ):

4.4 Երկրորդ կողմի համապատասխանության գնահատման գործունեություն (second-party conformity assessment activity)՝ համապատասխանության գնահատման գործունեություն, որն իրականացնում է համապատասխանության գնահատման օբյեկտի (4.2) համար հանդես եկող անձը կամ կազմակերպությունը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Համապատասխանության գործունեության տեսակների բնութագրման համար օգտագործվող առաջին, երկրորդ, երրորդ կողմ բնութագրիչները (դետսկրիպտորները) չպետք է շփոթել համաձայնագրի համապատասխան կողմերի իրավաբանական նույնականացման հետ:

Օրինակ՝ երկրորդ կողմի համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող անձինք կամ կազմակերպություններ են, օրինակ՝ արտադրանքի գնորդները կա՛մ օգտագործողները, կա՛մ հնարավոր սպառողները, որոնք ցանկանում են վստահել իրենց շահերը ներկայացնող մատակարարի կամ կազմակերպության կառավարման համակարգին: Օգտագործողի շահերը ներկայացնող կազմակերպությունների օրինակներում ներառված են սպառողների իրավունքները պաշտպանող կազմակերպությունները, օրենսդրությունը կանոնակարգող մարմինները, արտադրանքը և ծառայությունները կանոնակարգող մարմինները՝ սպառողների և հասարակության շահերը պաշտպանելու համար, կենտրոնացված պետական գնումներ կատարող կազմակերպությունները և մասնավոր սեկտորում գնման գործակալները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Եթե գործունեությունն իրականացվում է արտաքին մարմնի կողմից, որը գործում և հսկում է օգտատերերի շահեր ունեցող անձի կամ կազմակերպության կողմից, ապա նման գործունեությունը կոչվում է երկրորդ կողմի համապատասխանության գնահատման գործունեություն (օրինակ՝ մատակարարման շղթայի աուդիտները, որոնք գնորդի անունից իրականացվում են արտաքին մարմնի կողմից):

4.5 Երրորդ կողմի համապատասխանության գնահատման գործունեություն (third-party conformity assessment activity)՝ համապատասխանության գնահատման գործունեություն, որն իրականացնում է անձը կամ կազմակերպությունը, որն անկախ է համապատասխանության գնահատման օբյեկտը (4.2) տրամադրող անձից կամ կազմակերպությունից, ինչպես նաև այդ օբյեկտով հետաքրքրված կիրառողից:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Համապատասխանության գործունեության տեսակների բնութագրման համար օգտագործվող առաջին, երկրորդ, երրորդ կողմ բնութագրիչները (դետսկրիպտորները) չպետք է շփոթել համաձայնագրի համապատասխան կողմերի իրավաբանական նույնականացման հետ:

4.6 համապատասխանության գնահատման մարմին (conformity assessment body)՝ մարմին, որն իրականացնում է համապատասխանության գնահատման գործունեություններ, բացառությամբ հավատարմագրման (7.7)

4.7 հավատարմագրման մարմին (accreditation body)՝ պետության կողմից լիազորված մարմին, որն իրականացնում է հավատարմագրում (7.7):

© ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD-Բոլոր իրավունքները պաշտպանված են

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Հավատարմագրման մարմինն իր լիազորությունը կարող է ստանալ կառավարությունից, պետական մարմիններից, պայմանագրերով, շուկայում ճանաչման միջոցով կամ սխեմաների սեփականատերերի կողմից:

4.8 համապատասխանության գնահատման համակարգ (conformity assessment system)՝ մի շարք կանոններ և ընթացակարգեր (5.2) համանման կամ հարակից համապատասխանության գնահատման սխեմաների (4.9) կառավարման համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Համապատասխանության գնահատման համակարգը կարող է գործել միջազգային, տարածաշրջանային, ազգային, ենթազգային կամ արդյունաբերության ճյուղային մակարդակներով:

4.9 համապատասխանության գնահատման սխեմա (conformity assessment scheme), համապատասխանության գնահատման ծրագիր (conformity assessment programme)՝ մի շարք կանոններ և ընթացակարգեր (5.2), որոնք նկարագրում են համապատասխանության գնահատման օբյեկտները (4.2), սահմանում են նշված պահանջները (5.1) և տրամադրում են մեթոդաբանություն՝ համապատասխանության գնահատում իրականացնելու համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Համապատասխանության գնահատման սխեման կարող է կառավարվել համապատասխանության գնահատման համակարգի (4.8) շրջանակներում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Համապատասխանության գնահատման սխեման կարող է գործել միջազգային, տարածաշրջանային, ազգային, ենթազգային կամ արդյունաբերության ճյուղային մակարդակներով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3. Սխեմայում կարող են ընդգրկվել հավելված Ա-ում բացատրված համապատասխանության գնահատման բոլոր գործառույթները կամ դրանց մի մասը:

4.10 մուտք (access), մուտք դեպի սխեմա (access to a scheme)՝ համապատասխանության գնահատման սխեմայի (4.9) համաձայն համապատասխանության գնահատման ծառայություն (4.1) ստանալու հայտատուի հնարավորություն

4.11 մասնակից (participant), համակարգի մասնակից (participant in a system), սխեմայի մասնակից (participant in a scheme)՝ անձ կամ կազմակերպություն, որը ներդնում է համապատասխանության գնահատման համակարգը (4.8) կամ սխեման (4.9) կամ գործում է դրանց կանոններին և ընթացակարգերին (5.2) համաձայն՝ առանց համակարգի կամ սխեմայի մշակմանը, վերանայմանը կամ հաստատմանը մասնակցելու հնարավորության

4.12 անդամ (member), համակարգի անդամ (member of a system), սխեմայի անդամ (member of a scheme)՝ անձ կամ կազմակերպություն, որը մասնակցում է համապատասխանության գնահատման համակարգի (4.8) կամ սխեմայի (4.9) կանոնների և ընթացակարգերի (5.2) մշակմանը, վերանայմանը կամ հաստատմանը

4.13 սեփականատեր (owner), համակարգի սեփականատեր (owner of a system), սխեմայի սեփականատեր (owner of a scheme)՝ անձ կամ կազմակերպություն, որը պատասխանատու է համապատասխանության գնահատման համակարգի (4.9) կամ համապատասխանության գնահատման սխեմայի (4.9) մշակման և պահպանման համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Պարտադիր չէ, որ սխեմայի սեփականատերը կիրառի սխեման (4.9):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Համակարգի կամ սխեմայի սեփականատեր կարող է լինել համապատասխանության գնահատման մարմինը (4.6), պետական մարմինը, առևտրային ասոցիացիան, համապատասխանության գնահատման մարմինների խումբը և այլն:

5 Հիմնական հասկացություններին վերաբերող տերմինները

5.1 սահմանված պահանջ (specified requirement)՝ հայտարարված կարիք կամ ակնկալիք:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Սահմանված պահանջները կարող են սահմանվել նորմատիվ փաստաթղթերով, ինչպիսիք են՝ կանոնակարգերը, ստանդարտները և տեխնիկական պայմանները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Սահմանված պահանջները կարող են լինել հստակ սահմանված կամ ընդհանուր:

5.2 ընթացակարգ (procedure)՝ գործունեություն կամ գործընթաց իրականացնելու սահմանված եղանակ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Տվյալ համատեքստում գործընթացը սահմանված է որպես փոխկապակցված կամ փոխազդող գործունեությունների ամբողջություն, որոնք կիրառում են մուտքային տվյալները՝ նախատեսված արդյունք ստանալու համար:

(Աղբյուրը ԻՍՕ 9000:2015, 3.4.5, ձևափոխված: Բնօրինակ ծանոթությունը փոխարինվել է նոր ծանոթությամբ):

5.3 անկողմնակալություն (impartiality)՝ օբյեկտիվություն՝ կապված համապատասխանության գնահատման գործընթացի արդյունքների հետ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Օբյեկտիվությունը կարելի է հասկանալ որպես կողմնակալության կամ շահերի բախման բացակայություն:

5.4 անկախություն (independence)՝ անձի կամ կազմակերպության ազատված լինելը մեկ այլ անձի կամ կազմակերպության հսկողությունից կամ ենթակայությունից:

Օրինակ՝ Համապատասխանության գնահատման մարմինը (4.6) կարող է անկախ լինել համապատասխանության գնահատման օբյեկտ (4.2) հանդիսացող անձից կամ համապատասխանության գնահատման օբյեկտը (4.2) տրամադրող կազմակերպությունից:

6 Տերմիններ, որոնք վերաբերում են ընտրությանը և որոշմանը

6.1 նմուշառում (sampling)՝ համապատասխանության գնահատման օբյեկտին (4.2) վերաբերող նյութերի կամ տվյալների ընտրություն և (կամ) հավաքագրում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Ընտրությունը կարող է իրականացվել ընթացակարգի, ավտոմատացված համակարգի, մասնագիտական դիրքորոշման և այլնի հիման վրա:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Ընտրությունը և հավաքագրումը կարող է իրականացվել նույն կամ տարբեր անձանց կամ կազմակերպությունների կողմից:

© ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
© ARMSTANDARD-Բոլոր իրավունքները պաշտպանված են

6.2 փորձարկում (testing)՝ համապատասխանության գնահատման օբյեկտի (4.2) մեկ կամ մի քանի բնութագրերի որոշումն ըստ ընթացակարգի (5.2):

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Ընթացակարգը կարող է նախատեսված լինել փորձարկման ընթացքում տատանումները հսկելու համար, որպես արդյունքների ճշգրտության կամ հուսալիության ներդրում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Փորձարկման արդյունքները կարող են արտահայտված լինել որոշակի չափման միավորներով կամ որպես օբյեկտիվ համեմատություն՝ համաձայնեցված չափանմուշների (էտալոնների) հետ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3. Փորձարկման արդյունքներում կարող են ներառվել մեկնաբանություններ (օրինակ՝ կարծիքներ և մեկնաբանություններ)՝ փորձարկման արդյունքների և սահմանված պահանջների կատարման վերաբերյալ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 4. Փորձարկման (6.2) և հսկողության (6.3) հայեցակարգերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը տրված է Ա.3.4-ում:

6.3 հսկողություն (inspection)՝ համապատասխանության գնահատման օբյեկտի (4.2) ստուգումը և սահմանված պահանջներին կամ մասնագիտական դիրքորոշման հիման վրա ընդհանուր պահանջներին դրանց համապատասխանության որոշումը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Ստուգումը կարող է ներառել ուղղակի կամ անուղղակի դիտարկումներ, որտեղ կարող են ներառվել չափումներ կամ չափման միջոցների ելքային տվյալներ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Համապատասխանության գնահատման սխեմաներում (4.9) կամ պայմանագրերում հսկողությունը կարող է սահմանվել միայն որպես ստուգում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3. Փորձարկման (6.2) և հսկողության (6.3) հայեցակարգերի վերաբերյալ լրացուցիչ տեղեկատվությունը տրված է Ա.3.4 (Ա.3.4)-ում:

6.4 աուդիտ (audit)՝ համապատասխանության գնահատման օբյեկտի (4.2) վերաբերյալ համապատասխան տեղեկատվության ստացման և դրա օբյեկտիվ գնահատման համար գործընթաց, սահմանված պահանջների (5.1) կատարման աստիճանը սահմանելու նպատակով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Նշված պահանջները սահմանվում են նախքան աուդիտի իրականացումը, որպեսզի հնարավոր լինի ստանալ համապատասխան տեղեկատվություն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Աուդիտի օբյեկտների օրինակներ են կառավարման համակարգերը, գործընթացները, արտադրանքը և ծառայությունները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3. Հավատարմագրման նպատակով աուդիտի գործընթացը կոչվում է «գնահատում»:

6.5 վավերացում (validation)՝ որոշակի նպատակային օգտագործման կամ կիրառման համար հուսալիության հաստատում՝ սահմանված պահանջները (5.1) կատարված օբյեկտիվ վկայությունների ներկայացման միջոցով:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Վավերացումը կարող է կիրառվել պահանջների նկատմամբ՝ հաստատելու պահանջների հետ հայտարարագրված տեղեկատվության հետագա օգտագործումը:

6.6 ստուգում (verification)՝ օբյեկտիվ վկայությունների ներկայացմամբ հուսալիության հաստատում, որ սահմանված պահանջները (5.1) կատարված են:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Ստուգումը կարող է կիրառվել պահանջների նկատմամբ՝ հաստատելու պահանջների հետ հայտարարագրված իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվությունը, որոնք արդեն տեղի են ունեցել կամ արդյունքների վերաբերյալ, որոնք արդեն ձեռք են բերվել:

6.7 հավասարության սկզբունքներով գնահատում (peer assessment)՝ սահմանված պահանջներին (5.1) մարմնի համապատասխանության գնահատումը այլ մարմինների ներկայացուցիչների կողմից, որոնք համաձայնագրի խմբի (9.10) կազմում են կամ այդ խմբի թեկնածուներ են:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. «Թեկնածուներին» ընդգրկում են կազմի մեջ այն դեպքերում, երբ նոր խումբ է ձևավորվում և այդտեղ դեռ չկա ոչ մի մարմին:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. «Հավասարության սկզբունքներով գնահատում» տերմինը երբեմն կոչվում է «հավասարության սկզբունքներով գնահատական»:

7 Տերմիններ, որոնք վերաբերում են ստուգմանը, որոշման կայացմանը և հավաստմանը

7.1 վերլուծություն (review)՝ ընտրության և որոշման գործունեությունների պիտանիության, ամբողջականության և արդյունավետության, ինչպես նաև այդ գործունեությունների արդյունքների դիտարկումը՝ հաշվի առնելով համապատասխանության գնահատման օբյեկտի (4.2) կողմից սահմանված պահանջների (5.1) կատարումը

7.2 որոշում (decision)՝ վերլուծության (7.1) արդյունքների վրա հիմնված եզրակացություն, որ նշված պահանջների (5.1) կատարումը ցուցադրվել է կամ չի ցուցադրվել:

7.3 հավաստում (attestation)՝ կայացված որոշման (7.2) վրա հիմնված հայտարարության հրապարակում այն մասին, որ սահմանված պահանջների (5.1) կատարումը ցուցադրվել է:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Վերջնական հայտարարությունը, որը վկայակոչված է սույն ստանդարտում որպես «հաստատում», հայտարարում է, որ սահմանված պահանջները կատարված են: Նման հաստատումն ինքնին չի տալիս պայմանագրային կամ այլ իրավական երաշխիքներ:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Առաջին կողմի և երրորդ կողմի միջոցով հավաստման գործողությունների տերմինները տարբերվում են ըստ հայտարարագրի (7.5), սերտիֆիկացման (7.6) և հավատարմագրման (7.7) տերմինների, սակայն երկրորդ կողմի հավաստման համար առանձնահատուկ տերմիններ չկան:

7.4 հավաստման ոլորտ (scope of attestation)՝ հավաստման (7.3) ենթակա համապատասխանության գնահատման օբյեկտների (4.2) միջակայք կամ բնութագրեր

7.5 հայտարարագիր (declaration)՝ առաջին կողմի հավաստում (7.3)

7.6 սերտիֆիկացում (certification)՝ համապատասխանության գնահատման օբյեկտի (4.2) հավաստում (7.3) երրորդ կողմի միջոցով, բացառությամբ հավատարմագրման (7.7)

© ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են

© ARMSTANDARD-Բոլոր իրավունքները պաշտպանված են

7.7 հավատարմագրում (accreditation)՝ համապատասխանության գնահատման մարմնին (4.6) երրորդ կողմի հավաստում, որի միջոցով պաշտոնապես ցուցադրվում է համապատասխանության գնահատման որոշակի խնդիրներ լուծելու նրա իրազեկությունը, անկողմնակալությունը (5.3) և հետևողական գործունեությունը՝ համապատասխանության գնահատման հատուկ գործողություններ իրականացնելիս:

8 Տերմիններ, որոնք վերաբերում են համապատասխանության հսկողությանը

8.1 համապատասխանության հսկողություն (surveillance)՝ համապատասխանության գնահատման գործունեության համակարգված հսկողություն, որը հիմք է ծառայում համապատասխանության հայտարարության վավերականությունը պահպանելու համար

8.2 կասեցում (suspension)՝ մարմնի կողմից համապատասխանության հայտարարության ժամանակավոր դադարեցում ամբողջ հավաստման ոլորտի (7.4) կամ դրա մի մասի համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Հայտարարություն տվող մարմինը կասեցնում է համապատասխանության հայտարարության գործողությունը, քանի որ սահմանված պահանջներն (5.1) այլևս չեն բավարարվում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Հայտարարություն տվող մարմնի հաճախորդն ինքնակամ դիմում է կասեցնել համապատասխանության հայտարարության գործողությունը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3. Հայտարարություն տվող մարմինը կասեցնում է համապատասխանության հայտարարության գործողությունը, քանի որ այն ժամանակավորապես դադարում է կատարել համապատասխանության գնահատման գործունեության այդ տեսակը:

8.3 դադարեցում (withdrawal), չեղարկում (cancellation)՝ հայտարարություն տվող մարմնի կողմից համապատասխանության հայտարարության չեղյալ հայտարարում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Հայտարարություն տվող մարմինը դադարեցնում է համապատասխանության հայտարարության գործողությունը, քանի որ սահմանված պահանջներն (5.1) այլևս չեն բավարարվում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Հայտարարություն տվող մարմնի հաճախորդն ինքնակամ դիմում է դադարեցնել համապատասխանության հայտարարության գործողությունը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 3. Հայտարարություն տվող մարմինը դադարեցնում կամ փոխանցում է համապատասխանության հայտարարության գործողությունը, քանի որ այն դադարում է կատարել համապատասխանության գնահատման գործունեության այդ տեսակը:

8.4 գործողության ժամկետի ավարտ (expiry)՝ համապատասխանության հայտարարության գործողության ավարտը սահմանված ժամկետից հետո

8.5 վերականգնում (restoration)՝ համապատասխանության հայտարարության գործողության ամբողջական կամ մասնակի վերահաստատում

տրամադրող կամ հանդիսացող որևէ անձի կամ կազմակերպության կողմից դիմում

համապատասխանության գնահատման մարմինն (4.6) կամ հավատարմագրման մարմինն (4.7)՝ այդ օբյեկտի վերաբերյալ նշված մարմնի կողմից ընդունված որոշումը (7.2) վերանայելու նպատակով:

8.7 բողոք (complaint)՝ ի տարբերություն բողոքարկման (8.6), որևէ անձի կամ կազմակերպության կողմից համապատասխանության գնահատման մարմնի (4.6) կամ հավատարմագրման մարմնի (4.7) գործունեության վերաբերյալ անբավարարության արտահայտում, որի համար այդ մարմնից սպասվում է պատասխան:

9 Տերմիններ, որոնք վերաբերում են առևտրի խթանմանը և կանոնակարգմանը

9.1 հաստատում (approval)՝ արտադրանքի, ծառայության կամ գործընթացի շուկա հանելու կամ ըստ նշանակության կամ տրված պայմաններում օգտագործելու թույլտվություն:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Հաստատումը կարող է հիմնված լինել սահմանված պահանջների կատարման կամ սահմանված ընթացակարգերի ավարտման վրա:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Հաստատումը կարող է տրված լինել համապատասխանության գնահատման սխեմայի (4.9) համատեքստում:

9.2 նշանակում (designation)՝ համապատասխանության գնահատման մարմնի (4.6) կառավարության կողմից լիազորումը՝ համապատասխանության գնահատման որոշակի գործունեություն իրականացնելու համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Նշանակումն երբեմն անվանում են «ծանուցում»:

9.3 նշանակող լիազոր մարմին (designating authority)՝ կառավարության կազմում գործող կամ կառավարության կողմից լիազորած մարմին, որը նշանակում է համապատասխանության գնահատման մարմիններին (4.6), ինչպես նաև կասեցնում կամ դադարեցնում է դրանց նշանակումը (9.2)

9.4 համարժեքություն (equivalence), համապատասխանության գնահատման արդյունքների համարժեքություն (equivalence of conformity assessment results)՝ համապատասխանության գնահատման տարբեր արդյունքների բավարարություն՝ միևնույն սահմանված պահանջների (5.1) նկատմամբ համապատասխանության հաստատման միևնույն մակարդակն ապահովելու համար:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. «Համապատասխանության գնահատման արդյունք» արտահայտությունը նշանակում է համապատասխանության գնահատման ցանկացած գործունեության ելքային արդյունք (օրինակ՝ հաշվետվություն կամ սերտիֆիկատ) և կարող է ներառել հայտնաբերված անհամապատասխանություն:

9.5 ճանաչում (recognition), համապատասխանության գնահատման արդյունքների ճանաչում (recognition of a conformity assessment result)՝ այլ անձի կամ մարմնի կողմից

© ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են

© ARMSTANDARD-Բոլոր իրավունքները պաշտպանված են

իրականացված համապատասխանության գնահատման արդյունքների հավաստիության ճանաչումը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. «Համապատասխանության գնահատման արդյունք» արտահայտությունը նշանակում է համապատասխանության գնահատման ցանկացած գործունեության ելքային արդյունք (օրինակ՝ հաշվետվություն կամ սերտիֆիկատ) և կարող է ներառել հայտնաբերած անհամապատասխանություն:

9.6 ընդունում (acceptance), համապատասխանության գնահատման արդյունքների ընդունում (acceptance of a conformity assessment result)՝ այլ անձի կամ մարմնի կողմից իրականացված համապատասխանության գնահատման արդյունքների կիրառումը:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. «Համապատասխանության գնահատման արդյունք» արտահայտությունը նշանակում է համապատասխանության գնահատման ցանկացած գործունեության ելքային արդյունք (օրինակ՝ հաշվետվություն կամ սերտիֆիկատ) և կարող է ներառել հայտնաբերած անհամապատասխանություն:

9.7 միակողմանի համաձայնագիր (unilateral arrangement)՝ պայմանավորվածություն, որի համաձայն մեկ կողմը ճանաչում կամ ընդունում է մյուս կողմի համապատասխանության գնահատման արդյունքները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. «Համապատասխանության գնահատման արդյունք» արտահայտությունը նշանակում է համապատասխանության գնահատման ցանկացած գործունեության ելքային արդյունք (օրինակ՝ հաշվետվություն կամ սերտիֆիկատ) և կարող է ներառել հայտնաբերած անհամապատասխանություն:

9.8 երկկողմանի համաձայնագիր (bilateral arrangement)՝ պայմանավորվածություն, որի համաձայն երկու կողմերը ճանաչում կամ ընդունում են միմյանց համապատասխանության գնահատման արդյունքները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. «Համապատասխանության գնահատման արդյունք» արտահայտությունը նշանակում է համապատասխանության գնահատման ցանկացած գործունեության ելքային արդյունք (օրինակ՝ հաշվետվություն կամ սերտիֆիկատ) և կարող է ներառել հայտնաբերած անհամապատասխանություն:

9.9 բազմակողմանի համաձայնագիր (multilateral arrangement)՝ պայմանավորվածություն, որի համաձայն երկուսից ավելի կողմեր ճանաչում կամ ընդունում են միմյանց համապատասխանության գնահատման արդյունքները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. «Համապատասխանության գնահատման արդյունք» արտահայտությունը նշանակում է համապատասխանության գնահատման ցանկացած գործունեության ելքային արդյունք (օրինակ՝ հաշվետվություն կամ սերտիֆիկատ) և կարող է ներառել հայտնաբերած անհամապատասխանություն:

9.10 համաձայնագրի խումբ (agreement group)՝ մարմիններ, որոնք ստորագրել են համաձայնագիրը, որի վրա հիմնված է պայմանավորվածությունը

9.11 փոխադարձություն (reciprocity)՝ փոխհարաբերություններ երկու կողմերի միջև, որոնց դեպքում երկուսը միմյանց նկատմամբ ունեն միևնույն իրավունքներն ու պարտականությունները:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 1. Փոխադարձությունը կարող է գոյություն ունենալ երկկողմանի փոխադարձ կապերի ցանց կազմող բազմակողմանի համաձայնագրի (9.9) շրջանակներում:

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ 2. Չնայած հավասար իրավունքներին և պարտականություններին՝ դրանցից բխող հնարավորությունները կարող են տարբերվել, որը կարող է հանգեցնել կողմերի միջև անհավասար հարաբերությունների:

9.12 հավասար վերաբերմունք (equal treatment)՝ մատակարարից ստացվող արտադրանքի, ծառայությունների կամ գործընթացների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունք, որը ոչ պակաս բարենպաստ է, քան ցանկացած այլ մատակարարից ստացվող նմանատիպ արտադրանքինը, ծառայություններինը կամ գործընթացներինը՝ համադրելի իրավիճակում

9.13 ազգային վերաբերմունք (national treatment)՝ այլ երկրներից ծագող արտադրանքի, ծառայությունների կամ գործընթացների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունք, որը ոչ պակաս բարենպաստ է, քան ազգային ծագում ունեցող նմանատիպ արտադրանքինը, ծառայություններինը կամ գործընթացներինը՝ համադրելի իրավիճակում

9.14 հավասար և ազգային գործելակարգ (equal and national treatment)՝ այլ երկրներից ծագող արտադրանքի, ծառայությունների կամ գործընթացների նկատմամբ ցուցաբերվող վերաբերմունք, որը ոչ պակաս բարենպաստ է, քան ազգային կամ ցանկացած այլ երկրից ծագող նմանատիպ արտադրանքինը, ծառայություններինը կամ գործընթացներինը՝ համադրելի իրավիճակում:

Հավելված Ա (A)

(տեղեկատու)

Համապատասխանության գնահատման սկզբունքները

Ա.1 (A.1) Գործառնական մոտեցումը

Ա.1.1 (A.1.1) Համապատասխանության գնահատումը բաղկացած է երեք հաջորդական գործառնություններից, որոնք անհրաժեշտ են ցուցադրելու համար, որ սահմանված պահանջները կատարված են՝

- ընտրություն,
- սահմանում և
- վերլուծություն, որոշման կայացում և հավաստում:

Նման ցուցադրումը կարող է բովանդակություն կամ արժանահավատություն հաղորդել այն հայտարարություններին, որ սահմանված պահանջները բավարարված են՝ այդպիսով բարձրացնելով դրանք կիրառողների վստահությունը: Որպես սահմանված պահանջներ հաճախ կիրառվում են ստանդարտները, քանի որ դրանք արտացոլում են այն հարցերի լայն փոխհամաձայնությունը, որոնք ցանկանում են լուծել տվյալ իրավիճակում: Արդյունքում համապատասխանության գնահատումը հաճախ դիտարկվում է որպես ստանդարտներին առնչվող գործունեություն:

Ա.1.2 (A.1.2) Համապատասխանության գնահատումը կարող է կիրառվել արտադրանքի, գործընթացների, ծառայությունների, համակարգերի, տեղակայումների, նախագծերի, տվյալների, նախագծային փաստաթղթերի, նյութերի, պնդումների, անձանց կամ կազմակերպությունների նկատմամբ, ինչպես նաև այն մարմինների նկատմամբ, որոնք մատուցում են օբյեկտի համապատասխանության գնահատման ծառայություն: Հարմարության համար սույն ստանդարտում «համապատասխանության գնահատման» օբյեկտ արտահայտությունը կիրառվում է նշված օբյեկտներից որևէ մեկի կամ բոլորի ընդհանուր վկայակոչման համար:

Ա.1.3 (A.1.3) Համապատասխանության գնահատման գործունեության տարբեր օգտվողներից յուրաքանչյուրն ունի իր որոշակի պահանջները: Արդյունքում գոյություն ունի համապատասխանության գնահատման գործունեության տարբեր տեսակների բազմազանություն: Սակայն համապատասխանության գնահատման բոլոր տեսակներին հատուկ է միևնույն ընդհանուր մոտեցումը, ինչպես ցուցադրված է Ա.1 գծապատկերում:

Ա.1.4 (A.1.4) Ա.1 գծապատկերի Ա ուրվապատկերում ներկայացված է համապատասխանության գնահատման գործառնությունը: Յուրաքանչյուր գործառնություն գործողության որոշակի տեսակները կարող են փոխվել համապատասխանության գնահատման մի ձևից մյուսին՝ հիմք ընդունելով օգտագործողների պահանջները, սահմանված պահանջների բնույթը և համապատասխանության գնահատման օբյեկտը:


Ա.1.5 (A.1.5) Ա.1 գծապատկերի Բ ուղվապատկերում ներկայացված է ելքը մեկ գործառույթից և մուտքը հաջորդ գործառույթ: Ելքի բնույթը փոփոխվում է՝ կախված ձեռնարկված որոշակի գործողություններից:

Ա.1.6 (A.1.6) Ա.1 գծապատկերի Գ ուղվապատկերում ներկայացված է որոշումների կայացումը:

Ա.1.7 (A.1.7) Համապատասխանության գնահատման գործունեությունը կարող է բնութագրվել որպես «առաջին կողմի» (տես 4.3), «երկրորդ կողմի» (տես 4.4) կամ «երրորդ կողմի» (տես 4.5) գործունեություն: Ընդհանուր առմամբ այս կատեգորիաներից յուրաքանչյուրի համար՝

- համապատասխանության գնահատման գործունեությունները հսկվում կամ ղեկավարվում են սահմանման մեջ նշված անձի կամ մարմնի կողմից, և
- վճռական որոշումը, որի վրա հիմնված է հավաստումը, կայացվում է սահմանման մեջ նշված անձի կամ մարմնի կողմից:

Սահմանված պահանջների կատարումը ցուցադրելու պահանջ



© ԻՍՕ-Բոլոր իրավունքները պաշտպանված են
 © ARMSTANDARD-Բոլոր իրավունքները պաշտպանված են

Հանգուցային բառեր

- ՝ ուրվապատկեր Ա համապատասխանության գնահատման գործառույթ
- ՝ ուրվապատկեր Բ ելք գործառույթից կամ մուտք դեպի հաջորդ գործառույթ
- ՝ ուրվապատկեր Գ որոշումների կայացման վայր

Գծապատկեր Ա.1 (A.1) Համապատասխանության գնահատման նկատմամբ գործառույթային մոտեցում

Ա.2 (A.2) Ընտրությունը

Ա.2.1 (A.2.1) Ընտրությունը ներառում է ամբողջական տեղեկատվության հավաքման կամ ներկայացման գործողությունների պլանավորում և նախապատրաստում, ինչպես նաև որոշման հաջորդ գործառույթին անցնելու համար անհրաժեշտ մուտք: Ընտրության գործառույթի գործողությունները քանակությամբ և բարդությամբ խիստ տարբերվում են: Որոշ դեպքերում կարող է պահանջվել շատ փոքր ընտրության գործառույթ:

Ա.2.2 (A.2.2) Համապատասխանության գնահատման օբյեկտի ընտրության համար հաճախ առաջանում է որոշ դիտարկումների անհրաժեշտություն: Հաճախ նման օբյեկտը կարող է լինել նույնական ապրանքների խմբաքանակ, շարունակական արտադրություն, անընդհատ գործընթաց կամ համակարգ, կամ օբյեկտը կարող է լինել մի ամբողջություն, որն ունի բազմաթիվ գործունեության վայրեր: Նման դեպքերում կարող է առաջանալ ներկայացուցչական նմուշառման անհրաժեշտություն: Օրինակ՝ գետի ջրերի համար նմուշառման ծրագիրը, որի նպատակն է ցուցադրել, որ աղտոտումների նկատմամբ պահանջները կատարված են, պետք է համարել նմուշառման խոշորածավալ և կարևոր գործունեության օրինակ: Սակայն, երբեմն օբյեկտը կարող է լինել ամբողջական հավաքածու, օրինակ, երբ համապատասխանության գնահատման օբյեկտը մեկ առանձին արտադրանք է: Նույնիսկ նման դեպքերում նմուշառումը կարող է անհրաժեշտ լինել ամբողջ օբյեկտի այն մասը ընտրելու համար, որն ամբողջի ներկայացուցչական մասն է (օրինակ՝ նյութի հոգնածության որոշման համար կամրջի կրիտիկական մանրակների ընտրությունը):

Ա.2.3 (A.2.3) Կարող է նաև անհրաժեշտություն առաջանալ հաշվի առնել սահմանված պահանջները: Շատ դեպքերում կան ստանդարտ կամ նախկինում սահմանված այլ պահանջներ: Սակայն պետք է զգուշություն ցուցաբերել, երբ համապատասխանության գնահատման որոշակի օբյեկտի համար կիրառվում են նախկինում գործող պահանջներ: Օրինակ՝ կարող է զգուշություն պահանջվել պոլիէթիլեն խողովակների համար ստեղծված ստանդարտները պոլիպրոպիլեն խողովակների համար կիրառելու ժամանակ: Որոշ դեպքերում կարող է գործել միայն շատ ընդհանուր պահանջների համախումբ, որոնք համապատասխանության գնահատման մեջ օգտագործելու համար պետք է ընդլայնել այնպես, որ ընդունելի և հասկանալի լինեն օգտագործողներին: Օրինակ՝ կանոնակարգեր ընդունող պետական մարմինը կարող է պահանջել արտադրանքի համար անվտանգության անընդունելի

ռիսկի (ընդհանուր պահանջ) բացակայություն և ակնկալել սերտիֆիկացման մարմնից սերտիֆիկացված առանձին արտադրանքի կամ արտադրանքի տեսակների նկատմամբ հատուկ պահանջների սահմանում: Կամ կարող է առաջանալ կառավարման համակարգի ընդհանուր պահանջներին ուշադրություն դարձնելու անհրաժեշտություն, եթե այդ կառավարման համակարգն ուղղված է որոշակի շահագործման պահանջների կատարմանը:

Ա.2.4 (A.2.4) Ընտրությունը կարող է ներառել նաև ամենահարմար ընթացակարգերի ընտրություն (օրինակ՝ փորձարկման կամ հսկողության մեթոդներ), որոնք կարող են օգտագործվել որոշման գործառույթի համար: Հաճախ որոշման գործառույթի իրականացման համար պետք է ստեղծվեն նոր կամ կիրառվեն փոփոխված մեթոդներ: Ընթացակարգերի դիտարկումը կարող է ներառել հարմար դիրքերի և համապատասխան պայմանների ու դրանց կատարման համար անհատների ընտրություն:

Ա.2.5 (A.2.5) Ի վերջո, որոշման գործառույթի հիմնավոր կատարման համար կարող է պահանջվել լրացուցիչ տեղեկատվություն, որ ապացուցվի սահմանված պահանջների արդյունավետ կատարումը: Օրինակ՝ փորձարկման ոլորտը, որի համար պետք է կատարվի լաբորատորիայի հավատարմագրում, պետք է սահմանվի մինչև որոշման գործառույթի համապատասխան գործողության իրականացումը: Կամ որոշման համապատասխան գործողության իրականացման համար կարող է պահանջվել ծառայության նկարագրություն: Բացի դրանից որոշման գործառույթի գործողություն կարող է լինել միայն տեղեկատվության վերլուծությունը, որը պետք է նույնականացվի և հավաքվի: Օրինակ՝ կարող են պահանջվել արտադրանքի օգտագործման հրահանգների պատճենները կամ նախագգուշական մակնշում:

Ա.2.6 (A.2.6) Ա.1 (A.1) գծապատկերում ամբողջ տեղեկատվությունը, նմուշները (եթե կիրառվում է նմուշառում), որոշումները և ընտրության գործառույթից այլ ելքերը ներկայացված են որպես «տեղեկատվություն ընտրված օբյեկտների վերաբերյալ»:

Ա.3 (A.3) Սահմանումը

Ա.3.1 (A.3.1) Գործունեության տեսակները, ըստ սահմանման, ձեռնարկվում են համապատասխան գնահատման օբյեկտի կամ դրա նմուշի կողմից սահմանված պահանջների կատարման վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն ստանալու նպատակով: Գործունեության որոշ տեսակները ըստ սահմանման տրված են Ա.3.2 (A.3.2)-ում և Ա.3.3 (A.3.3)-ում:

